

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԻ

2013 Թ.-Ի ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի ԹԻՎ 4 ՆԻՍՏԻ

ՈՐՈՇՈՒՄ

I. Լսելով Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռ. Խ. Հակոբյանի հաշվետվությունը համալսարանի 2011-2012 ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ և ղեկավարվելով «Գավառի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 15-րդ կետով՝

ԳՊՀ խորհուրդը որոշում է.

1. Հավանություն տալ Գավառի պետական համալսարանի 2011-2012 ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ ռեկտորի հաշվետվությանը:
2. Գավառի պետական համալսարանի 2011-2012 ուսումնական տարվա գործունեությունը գնահատել բավարար:

II. Լսելով Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռ. Խ. Հակոբյանի հաշվետվությունը՝ համալսարանի 2012 թվականի ֆինանսական տարվա գործունեության վերաբերյալ՝ ԳՊՀ խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Գավառի պետական համալսարանի 2012 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը:

III. Լսելով Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռ. Խ. Հակոբյանի զեկուցումը ԳՊՀ 2013 թվականի ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշվի վերաբերյալ՝ ԳՊՀ խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Գավառի պետական համալսարանի 2013 թվականի ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշիվը՝ ԳՊՀ բյուջեն:
2. Հանձնարարել ԳՊՀ ռեկտորին՝ 2013 թվականի ծախսերը կատարել հաստատված բյուջեին համապատասխան:

IV. Լսելով Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռ. Խ. Հակոբյանի հաշվետվությունը ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի 2012 թ. կատարման վերաբերյալ՝ ԳՊՀ խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԳՊՀ հակակոռուպցիոն ուղղմամբ ռազմավարական ծրագրի 2012թ. կատարման վերաբերյալ հաշվետվությունը:

Խորհրդի նախագահ՝

Խորհրդի քարտուղար՝

Հ. Հ. Հակոբյան

Վ. Լ. Կատվալյան